

---

**ՀԱՅԵՐԵՆԻ ՀԱՄԱՏԵՔՍՏԻ ՉԱՅՆ - ԿՅԱՆՔ, ԼՌՈՒԹՅՈՒՆ - ՄԱՀ  
ԼԵԶՎԱՍՏԱԾՈՂԱԿԱՆ ՀՈՄԱՆԻՇՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

**ԹԱԴԵՎՈՍ ՏՈՆՈՅԱՆ**

Լեզվաբանական տեսություններից մի քանիսը լեզվի ծագումը կապում են բնության ձայների, ձայնարկությունների (կենսաբանական տեսություն), աշխատանքային ճիչերի (հասարակական դաշինքի տեսություն) հետ՝ ընդգծելով **ձայնի** (որ խոսքի ձգտող լեզվի նախնական մասնիկն է) աննախադեպ **դերակատարությունը մարդ բանական էակի առաջացման շարունակական գործընթացում**: Այդ զարգացումների ընթացքում, բնականաբար, մարդը պետք է պահպանած լիներ իր քաղաքակրթական սկզբի մասին հիշողությունն ու փորձը, որոնց վրա աստիճանաբար պիտի խարսխեր իր ողջ մտածողական համակարգը:

Է. Տորնդայկը կարծում է, որ մարդը սկզբից նեթ ունեցել է կամային թոթովանքներ, որոնք ուղեկցել են նրա բնագոյներին, զգացումներին ու ապրումներին: Հետագայում այդ թոթովանքներն աստիճանաբար առանձնացվել են առարկաների կամ գործողությունների հասկացությունները ներառելու և տարբերելու համար և, փաստորեն, դարձել են բառեր, որոնք հետզհետե յուրացրել են ավելի մեծ թվով մարդիկ, ինչի շնորհիվ դրանք դարձել են բոլորի սեփականությունը: Կարելի է ասել՝ ձայնի և իմաստի փոխհարաբերության հիմնախնդիրն ամենաբարդերից մեկն է լեզվաբանության մեջ:

Է. Աթայանը գրում է. «Հնչյունի և հասկացության փոխհարաբերությունը բարդ խնդիր է, որի լուծմանն առայժմ անհիմաստ է ձեռնամուխ լինել: Լեզվում առանձին առնված ներունակ հնչյունը պետք է որ հասկացություն նշանակի, այլապես հնարավոր չէ բացատրել, թե ինչպես է նա ձեռք բերում այդ կարողությունը՝ բառի ու ասույթի կազմում այլ հնչյունների հետ մեկտեղ գործածվելիս»<sup>1</sup>: Իհարկե, ավելի վաղ լույս տեսած ռուսերեն տարբերակում բառացի շարադրանքը մի փոքր այլ է. «Հնչյունի և հասկացության փոխհարաբերությունը բարդ հիմնախնդիր է, որին անհնար է մոտենալ: Լեզվի մեջ առանձին ներքին ձայնը պետք է հասկացություն նշանակի, այլապես հնարավոր չէ բացատրել, թե բառի կամ արտահայտության մեջ այն ինչպես է մյուս ձայների հետ

---

<sup>1</sup> Է. Աթայան, Լեզվական աշխարհի ներքին կազմավորումը և արտաքին վերաբերությունը, Եր., 1981, էջ 103:

սկսում նշանակել այդ հասկացությունը»<sup>2</sup>, սակայն կարծում ենք՝ էականորեն ոչինչ չի փոխվում. հարցն այն է, թե հնչյունը (ձայնը) ունի՞ արդյոք իմաստային նշանակություն: Մեզ այս խնդիրը հետաքրքրում է այնքանով, որ **ձայն** (հնչյուն) - **բառ** (անուն, հասկացություն) - **խոսք** (բան, տեքստ) հիերարխիկ շղթայի արդեն իսկ առաջին օղակը՝ ձայնը (հնչյունը), իմաստային ծանրաբեռնվածության առումով նույնպես կարող է լինել խոսքի (բանի) միավորը: Է. Աթայանի՝ «ներունակ հնչյունը պետք է որ հասկացություն նշանակի» ենթադրությունը շաղկապվում է մեր այն համոզմանը, որ եթե շղթայի երկրորդ (**բառ**) և երրորդ (**խոսք**) օղակներում առկա է իմաստը, ապա առաջին օղակը (**ձայն**) չի կարող գուրկ լինել դրանից:

Չիշենք, որ ըստ Շ. Շտեյնթալի՝ «լեզվաբանության առարկան լեզուն է կամ լեզուն ընդհանրապես, այսինքն՝ գիտակցված ներքին, հոգեկան, հոգևոր շարժումների, վիճակների և հարաբերությունների արտահայտությունը հողաբաշխ ձայների միջոցով»<sup>3</sup>: Նա հնչյունի (ձայնի) և մտածողության միջև հնչողության միջոցով ստեղծվող հոգեբանական փոխկապակցվածությունը համարում է լեզվի ներքին ձև՝ **«հնչյունի և մտածողության միջև փոխկապակցվածություն, որը իրականացվում է հնչողության միջոցով»**<sup>4</sup>:

Վ. Հումբոլդտը, սակայն, լեզվի ներքին ձև է համարում քերականական և բառաիմաստային համակարգերի հիմքում ընկած կառուցվածքը՝ այն հակադրելով լեզվի հնչյունային ձևին, որը ընկալում է որպես լեզվի արտաքին կողմ:

Է. Տորնդայկի մոտեցումը ենթադրում է, որ առանձին մարդկանց ձայն-թոթովանքների հնչողության միջոցով կապ է առաջանում այդ ձայնն արտաբերող մարդու մտածածի և այն լսող մարդու մտածածի միջև, այլապես փոխըմբռնում չի կարող տեղի ունենալ:

Իհարկե, չպետք է հակադրել այս երկու հայեցակարգերը. և՛ լեզվի ներքին կառուցվածքը՝ քերականությունը, և՛ հնչյունային նկարագիրը (լեզվի արտաքին կողմ) լեզուն դարձնում են ինքնատիպ մտածողական համակարգ, որը յուրովի է վերացարկում ու նկարագրում աշխարհը:

Մեզ համար առավել էական է, որ **խոսքը ձայնի** (ընդհանրապես գոյության) **այն մակարդակն է խորհրդանշում, ուր առկա է լսողը**, այսինքն՝ **խոսքը միայն այն դեպքում կա, երբ ասողին լսող կա**: Խոսքի այլ դրսևորում պարզապես դժվար է ենթադրել. այն գոյություն ունի շնորհիվ լսողի (ընթերցողի), այսինքն՝ եթե չկա ասող-լսող կամ գրող-ընթերցող հարաբերությունը, չի կարող գոյություն ունենալ խոսք, գրականություն, տեքստ ընդհանրապես:

<sup>2</sup> **Атаян Э.** Аспекты организации и функционирования языковой сферы. Ер., 1976, с. 95.

<sup>3</sup> <http://www.vash-kursovnik.ru/kursovye/1061.htm>

<sup>4</sup> Նույն տեղում:

Այս երկբևեռ հարաբերությունը ոչ միայն խոսքի համակարգային կառույցի հիմքն է, այլև նպատակը. խոսքի մշտական մղումը լսելի լինելն է, այլապես այն վերածվում է աղմուկի: Քաղաքակրթական ողջ ընթացքը խոսքը աղմուկից հեռու պահելն է, ընդ որում՝ առաջին հերթին խոսքն ինքն է ձգտում դրան, և այդ ընթացք-ձգտումը անխուսափելիորեն հայտնվել է բանահյուսության, գրականության մեջ, ընդհանրապես այն տեքստերում, որոնք ընդունել-յուրացրել է հանրային հիշողությունը, և այնպիսի ոչ անհիմն տպավորություն է ստեղծվում, որ գրականության գաղտնի նպատակը խոսքն ինքն է: Մասնավորապես հայ բանահյուսությունն ու գրականությունն ընդհանրապես հագեցած են բառապաշարային այնպիսի շերտով, որն ընդգրկում է լեզվախոսքային տարբեր դրսևորումների անուններ, որոնք լեզվաբանության կամ գրականագիտության մեջ տերմիններ են (օրինակ՝ լեզու, խոսք, բառ, հնչյուն, ձայն, գիր, վանկ, հանգ, նամակ, թուղթ և այլն), իսկ գեղարվեստական տեքստում՝ պարզապես բառեր: Ավելի 'ն, խոսքը դառնում է խոսքի նպատակ, և այսպիսով հայերեն տեքստը հաճախ դրսևորվում է **ինքնարտահայտմամբ**, երբ **գրական ստեղծագործության մեջ հենց խոսքն է դառնում գործող «անձ»**, երբ **խոսքը կերպարայնացվում է**, մի տեսակ **անձնավորվում-հերոսացվում**, ի վերջո՝ նաև **խոհրդանշայնացվում**:

Հայերենը խորությամբ է զգում խոսքի քաղաքակրթական դերն ու կոչումը և իր պատմագեղարվեստական դրսևորումներում հաճախ է փաստում այդ իրողությունը:

**Հնչյունը (ձայնը) ոչ միայն կենդանի գոյության, այլև այդ գոյության կերպի (քաղաքակրթական) կրողն է:**

Տվյալ մշակույթի յուրօրինակությունը սկսվում է ձայնային (հնչյունական) համակարգի առանձնահատկությունից, քանի որ բանը (խոսքը, տեքստը) չի կարող լինել և դրսևորվել առանց իր նվազագույն միավորի՝ ձայնի: Ձայնը, ինչպես շարժումը (նաև որպես շարժում), գոյության նախապայմաններից մեկն է:

**Ձայնի գոյությունը ենթադրում է կյանքի գոյություն, ձայնի բացակայությունը անգոյությունն է, մահը:**

Արտաքուստ զուտ իմաստասիրական (փիլիսոփայական) թվացող այս կանոնը հայերեն ստեղծված տեքստերում իր բազմաթիվ գեղարվեստական հիմնավորումներն ու ապացույցներն ունի. շատ ու շատ նշանավոր տեքստերի մեջ աշխարհընկալման նույն տիրույթում են ձայնն ու կենդանի գոյությունը (կյանքը), և մեկ այլ՝ հակառակ տիրույթում են լռությունը (ան-ձայնությունը) և **անկենդանություն-անգոյությունը (մահը)**: Այլ կերպ՝ հայերեն տեքստն ունի՝

ա) **կյանքի ու ձայնի համընկալում**,

բ) **մահվան ու լռության համընկալում**:

Այս իրողությունները մինչև օրս չեն ուսումնասիրվել, սակայն

դրանց բացահայտումը կարևոր է՝ հասկանալու ոչ միայն հայերեն, այլև մյուս լեզուներով ստեղծված տեքստերում ապրող տարբեր աշխարհընկալումները: Հայերեն տեքստի ուսումնասիրությունը միշտ ունեցել է, այսօր ևս առաջադրում է լեզվամտածողական-արժեհամակարգային, սրա վրա հենվող մշակութաբանական ուսումնասիրության պահանջ:

Լռության ու ձայնի, մահվան ու կյանքի իմաստային ներհակությունները, ձայնի ու կյանքի, ինչպես և լռության ու մահվան տեքստային-բովանդակային համընկալումները լեզվամտածողական առումով ունեն աշխարհընկալումային ու աշխարհաճանաչողական նշանակություն և հայերենի համատեքստի (հայոց լեզվով ստեղծված արժեքավոր տեքստերի ամբողջության) կարևոր հիմնաքարային շերտերից են: Ցավոք, ո՛չ գրականագիտության և ո՛չ էլ լեզվաբանության մեջ այս ելակետը մինչ օրս պատշաճ ուշադրության չի արժանացել, սակայն, մեր կարծիքով, տեքստի կառուցվածքի բացահայտման, տվյալ լեզվով տեքստում և տեքստերի ամբողջության մեջ ամփոփված լեզվամտածողական համակարգի բացահայտման առումով անգնահատելի արժեք ունի և անշրջանցելի է, քանի որ մասնավորապես գրականագիտությունն այսօր հասել է մի աստիճանի, երբ միայն բանասիրության տիրույթում մնալու, բանասիրությունից չպոկվելու դեպքում կարող է ոչնչանալ որպես գիտություն, իսկ լեզվաբանական-տեքստային, լեզվամտածողական-արժեհամակարգային, համատեքստային-մշակութաբանական մոտեցում-մեթոդների համադրմամբ ուսումնասիրությունների դեպքում անպայմանորեն նոր կյանք ու նոր շնչառություն ձեռք կբերի: Իսկ լեզվաբանությունն այս մոտեցում-մեթոդների կիրառման դեպքում կխուսափի մեկուսացման օրըստօրե ահագնացող վտանգից, կմոտենա կյանքին ու իրականությանը, կբարձրացնի իր գործնական, կիրառական արժեքը:

Չայն-բաո-խոսք (տեքստ) աճական շարքի յուրաքանչյուր անդամ դրսևորվում է նախ հայ հին, ապա և միջնադարյան պոեզիայում, ուր տեքստի արտաքին թաղանթի վրա ավելի շատ իշխում են եկեղեցական-կրոնական, ապա և վարդի ու սոխակի սիրո սխեմատիկ փոխհարաբերությունների անդրադարձները: Սակայն մինչևիսկ գողթան երգերում և վիպապարում անհնար է չնկատել խոսքասացության - բանի ենթագիտակցական արժևորումները.

Քեզ *ասեմ*, այր քաջ Արտաշէս,

Որ հաղթեցեր քաջ ազգին Ալանաց,

Ե կ հավանեա ց *բանից* աչագեղոյ դստերս Ալանաց՝

Տալ զպատանիդ...<sup>5</sup>:

<sup>5</sup> «Հայ հին և միջնադարյան քնարերգություն», Եր., 1986, էջ 8: Այսուհետև սույն գրքից

Գողթան երգերից հետևում է, որ թագավորական օրենքներ են համարվում ներդաշնակ փողհարումն ու թմբկահարումը, այսինքն՝ ձայների ներդաշնակումն ու դրանց ներդաշնակ արձակումը՝ մեղեդին:

Մեք փող հարուաք

Եւ թմբկի հարկանեաք,

Որպէս **օրէն է** թագաւորաց (12):

Պետք է ենթադրել, որ ներդաշնակ ձայնելը, ձայնի երաժշտականությունը եղել են թագավորական օրենքներ:

«Տաղ ի վերա կռունկին» (կամ պարզապէս «Կռունկ») ժողովրդական երգում զարգանում է սյուժետային մի գիծ, որի կիզակետը ձայնն ու լուրն են:

Կռո՛ւնկ, ուստի՞ կու գաս, **ծառայ եմ ձայնիդ,**

Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունիս...

.....

Կռո՛ւնկ, պահ մի կացի՛ր, **ձայնիկդ** հոգիս,

Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՛ս (47):

Անհնար է չնկատել հին վեպի «որպէս օրէն է թագաւորաց» տողի և «Կռունկ»-ի «ծառայ եմ ձայնիդ» արտահայտության միջև ներքին կապը՝ ներդաշնակ ձայնի թագավորական բնույթը և ձայնին ծառայ լինելու հանգամանքը (թագավոր և ծառայ): Որոշ դեպքերում երգվող «**ծարավ եմ ձայնիդ**» ձևակերպումը նույնպէս այս տրամաբանությունից դուրս չէ:

«Մեղեդի ծննդյան» ստեղծագործության մեջ Նարեկացին ձայնի խորհրդով է ներկայացնում **ծնունդը** (սկիզբը):

**Չայն** քաղցրանուագ որ ի նմանէ հնչէր (100):

«Հարության» տաղի մեջ մինչև ճոճ ու ճապուկ ճորտը եզին **ձայն** չի տալիս, արքայի որդու սայլիկը չի **շարժվում** (կենդանանում, կյանք ստանում): Կարևոր դերակատարությունն այս տաղում նույնպէս, ինչպէս տեսնում ենք, վերապահված է ձայնին:

Այն ճորտն ճոճ էր և ճապուկ,

Նա **ձայն ածէր** եզն ամոլին

.....

և ահա **շարժէր** սայլիկն այն,

և ահա **խաղայր** անին այն (104):

Հատկանշական է, որ **շարժումը** (այսինքն՝ կյանքի նախապայմանն ու գրավականը) և ձայնը այս տողերում **հատկապէս պատճառահետևանքային կապի մեջ են**:

«Տաղ խաչի վերացման» ստեղծագործության մեջ հենց ձայնն է դառնում ներբողման առարկա:

---

կատարվող մեջբերումների հղումները կտրվեն շարադրանքում՝ փակագծերում նշելով համապատասխան էջը:

Ես **ձայն** գառիծուն ասեմ՝  
որ գոչեր ի քառաթևին,  
Ի քառաթևին գոչեր,

**ձայն** առնէր ի սանդարամետն (108):

Խաչվող առյուծի ձայնը քանդում է այն ամբողջները, որոնց մեջ գեր-  
յալներն են, և ազատում է վերջիններին:

Ահեղ **ձայն**ս որ ես լուայ

... Զամուրս իմ քակել կամի, **գերելոցն առնել գերեղարձ** (108):

Այստեղ **ձայնի** և **քաղաքակրթական գոյության** առաջին պահանջի՝  
ազատության բացահայտ առնչությունն է, որ դրսևորվում է նաև «քառ-  
տուն գագ» խոր հորն ընկած Դավթին հասնող ձայնի մեջ:

12-րդ դարի բանաստեղծ Ներսես Շնորհալու «Եղեսիայի ողբը»  
պոեմում Եղեսիան արևելյան քաղաք Անիին հրավիրում է մասնակցե-  
լու իր **ձայնին**:

Բայց և զքեզ յարս հրաւիրեմ,  
արևելեան քաղաքդ Անի,  
Կցորդ իմոյս լինել **ձայնի**

և սփոփիչ տարակուսի (166):

Այստեղ արդեն ձայնի մենակ լինելու վտանգավորության (մենակ  
ձայնը կարող է ճիչի, այնուհետև նաև աղմուկի վերածվել) ենթագի-  
տակցությունը կա և բազմաձայն-պոլիֆոնիկ մտածողության ակնար-  
կը՝ ձայնին կցել մեկ այլ ձայն:

Միջնադարյան հայրեններում հատկապես սիրո հավքի ձայնն է  
դողացնում սիրահարի սիրտը:

Գիշերս ես ի քուն էի,  
իմ սրտիս ականջն էր ի բաց,  
Միրու հասն ի **ձայն** էած,

լոկ լսեց սրտիկս ու դողաց... (296):

Ձայնի և սրտի (կյանքի մյուս խորհրդանիշի) անմիջական կապի  
փաստումն են այս տողերը:

Լեզվական իրողությունների բացահայտումը կարիք է գգում խոս-  
քային միջավայրի, և այդ միջավայրի ընտրության հարցում մենք ա-  
ռանձնացնում ենք զրական տեքստը, մասնավորապես՝ բանաստեղծա-  
կանը, քանի որ վերջինս գերազանցում է մյուսներին իմաստային-գա-  
ղափարական-հոգեբանական խտության տեսակետից: Լեզուն և ճա-  
նաչողական մեխանիզմը (մտածողությունը) միմյանց շաղկապող ճա-  
նաչողական լեզվաբանությունը, այս առումով, լեզվական-քերականա-  
կան իրողությունների ուսումնասիրությունից գատ, մեր համոզմամբ,  
արդյունավետության կարող է հասնել առավելապես խոսքային (տեքս-  
տային) ամբողջության քննության ճանապարհով: Ինչո՞ւ: Որովհետև  
խոսք-տեքստն է գտում, պահում և պահպանում մտածողության ար-

գասիքը, որը դառնում է տվյալ լեզվի վրա խարսխվող լեզվամտածողական արժեհամակարգ: Իսկ լեզվախոսքային իրողությունների և ճանաչողական-մտածողական գործընթացի կապը զգալիորեն շոշափելի է դառնում տեքստային այն հատվածներում, որտեղ ի հայտ են գալիս լեզվական-խոսքային միջավայր ներկայացնող հասկացությունների (օրինակ՝ լեզու, խոսք, բառ, հնչյուն, ձայն, գիր, անուն, վանկ, հանգ, նամակ, թուղթ և այլն), դրանց հոմանիշների (օրինակ՝ բան, բարբառ, ասք, ճիչ և այլն) և հականիշների (օրինակ՝ լռություն, համրություն, աղմուկ, և այլն) գեղարվեստական տեքստային դերակատարությունները, կերպարայնացումները, խորհրդանշանացումները և այլն: Այդ ընթացքում է նաև հնարավորություն ստեղծվում բառի կիրառության ուղիղ իմաստից փոխաբերական իմաստի անցնելու համար, և այդ անցման արդյունքն է գեղարվեստական գրականությունը (տեքստը), իսկ կոնկրետ խոսք-տեքստը (նաև գեղարվեստական) ավելի ճանաչելի է իր լեզվի մտածողական համակարգում, որի առանձնահատկությունները, կարծում ենք, պետք է փնտրել ոչ միայն լեզվի մեջ (ձևային կողմ), այլև խոսքի (իմաստային կողմ), ոչ միայն լեզվական մակարդակում, այլև խոսքային:

Թերևս այս սկզբունքն է 20-րդ դարի փիլիսոփայության և բանասիրության ճանաչված դեմքերից մեկին՝ Ռոլան Բարտին, հանգեցրել գրականությունը համարելու գիտություն ոչ թե «մարդկային սրտի», այլ «մարդկային խոսքի» մասին. «Մի կողմից, գրականությունը կարծես թե հաղթահարել է դենտատ (տվյալ դեպքում՝ ընդհանուր, տրամաբանական իմաստը.- Թ. Տ.) լեզվի տապալման տարրական փորձերը, ինչի շնորհիվ այժմ կկարողանա ավելի ազատորեն ձեռնամուխ լինել լեզվի իրական, արդեն ոչ թե «բառերով» կամ «քերականությամբ», այլ կոննոտատիվ (տվյալ դեպքում՝ ոչ հիմնական, ավելի շուտ՝ լրացուցիչ, փոխաբերական.- Թ. Տ.) իմաստով, եթե կուզեք «ճարտասանությամբ» որոշվող սահմաններն ուսումնասիրելուն, մյուս կողմից, լեզվաբանությունն ինքը... մտադրվում է համակարգել կոննոտատիվ երևույթները, վերջապես ստեղծել «ոճի» տեսությունը... բացահայտելով իմաստի ճշմարիտ սահմանագծերը: Գրականության և լեզվաբանության այս միացումը նշանավորում է դրանց միասնական գործունեության նոր մակարդակ»<sup>6</sup>: Ռ. Բարտը միաժամանակ հավելում է, որ ստեղծված պայմաններում «գրականությունն իր վրա է վերցնում սեփական լեզվի նկատմամբ պատասխանատվությունը»<sup>7</sup>:

Գրականությունը կարող է տեքստի միջոցով ազդել լեզվի կառուցվածքի վրա, փոխել նրա ձևերի իմաստային սահմանները, փոփոխել,

<sup>6</sup> <http://yanko.lib.ru/books/cultur/bart-all.htm>

<sup>7</sup> Նույն տեղում:

անգամ փոխել բառի իմաստը, բայց գրականությանը մշտապես ընդդիմանում է լեզվամտածողական համակարգը՝ արժեհամակարգային իր «մարմնով», որն իր հերթին գրականության (տեքստի) ստեղծման նախապայման է: Լեզվամտածողական հոմանիշությունը, որն այդ «մարմնի» հյուսվածքներից է, ցույց է տալիս, որ կա լեզվախոսքային իմաստների երկբևեռ (դրական և բացասական) գլոբալացման վտանգ, ինչը կարող է գրականության մահացման պատճառ դառնալ: Այնպես որ, Բարտն այնքան էլ ճիշտ չէ, երբ ասում է, թե «գրականությունն իր վրա է վերցնում սեփական լեզվի նկատմամբ պատասխանատվությունը»: **Լեզուն իր «պահպանողականությամբ» և գրականությունն իր «դեմոկրատիզմով» թշնամական դիրքերում են, դրանց առայժմ հաշտեցնել է կարողանում տեքստը՝ իր լեզվամտածողական-արժեհամակարգային պաշարով:**

Կապ ունի՞ արդյոք լեզվի և գրականության մահուկենաց կռիվը տեքստային բովանդակության մեջ դրսևորվող մահվան ու լռության լեզվամտածողական հոմանիշության հետ: Մեր համոզմամբ՝ անպայման: Ընդհանրապես տեքստային այն հատվածները, որոնցում առկա է լեզվի ինքնապաշտպանական «բնագործ» ( «Ես իմ անուշ Հայաստանի արևահամ բառն եմ սիրում» և այլն), այդ կապի օրինակներ են:

Հայերենի համատեքստը փաստում է լռության ու մահվան համընկալման (լեզվամտածողական հոմանիշության), ձայնի ու կյանքի համընկալման (լեզվամտածողական հոմանիշության) իրողությունները: Կարծում ենք, որ մեր առաջադրած **լեզվամտածողական հոմանիշությունն** հասկացությունը և դրա բովանդակությունն այնքան պարզ են ու մատչելի, որ կարիք չկա դրանց առանձին անդրադառնալու: Օրինակ՝ **ձայնը** և **արյունը** բառային հոմանիշներ չեն, բայց լեզվամտածողական հոմանիշներ են, քանի որ թեև դրանց բառային իմաստները հեռու են, այնուամենայնիվ կա մի հասկացություն, որը եթե ոչ կոնկրետ տեքստում, ապա համատեքստում անպայմանորեն միավորում է այդ իմաստները: Դա **կյանք**-ն է: **Լռությունը** և **մութը** նույնպես բառային հոմանիշներ չեն, բայց լեզվամտածողական հոմանիշներ են, քանի որ հայերենի համատեքստում դրանց միավորում է **մահ** հասկացությունը: Այս հոմանիշությունը միջնորդավորված հոմանիշություն է:

Հիշենք Վ. Տերյանին.

Սիրող թող միշտ խնդա կամ լա- **մահ** է **մթին** երբ **լուռ** է նա<sup>8</sup>:

Տերյանի տեքստի լեզվամտածողական ատաղձը, Տերյանի մշակութային ենթագիտակցությունը մեկ անգամ չէ, որ այսպես զգում են **լռության ու մահվան** լեզվամտածողական հոմանիշությունը.

Ա՛ իս, այն **գիշերը**՝ անսահման երկա՛ր,

<sup>8</sup> [http://teryan.com/vt\\_Biography\\_arm.html](http://teryan.com/vt_Biography_arm.html):



Այն **լռությունը՝ մահու** պես տխուր<sup>9</sup>:

Հայերենի տեքստը (համատեքստը) իր առջև դնում և լուծում է **ձայնը ճանաչելու, ձայները զանազանելու** խնդիրները: Ու եթե որևէ կենդանի էություն, մարմին իր ձայնով փաստում է հենց իր կենդանությունը, դա դեռևս չի նշանակում, որ նպաստում է **մշակութային-քաղաքակրթական գոյությանը**, այսինքն՝ սեփական ձայնով սեփական գոյությունը փաստելը դեռևս բավարար պայման չէ այդ ձայնը քաղաքակրթական համարելու համար:

Նախ որպես սոսկ կյանքի ու գոյության խորհուրդ՝ հայերեն տեքստերում հայտնվելով որպես առանձին գեղարվեստական մարմին՝ կերպար, խորհրդանիշ և այլն, ձայնը դրսևորվում է և՛ որպես բացառապես ֆիզիկական, բնության երևույթ, և՛ որպես քաղաքակրթական, հանրային երևույթ (այսինքն՝ խոսք, տեքստ), սակայն նույն այդ տեքստերում ձայնի՝ որպես գոյության բացառիկ երևույթի ընկալումը մշտապես շաղկապվում է ոչ միայն պարզապես կենդանությանը, այլև հատկապես բանական-մշակութային-քաղաքակրթական գոյությանն ու լինելությանը: Մեր առաջադրած այս տեսակետի վկայությունները բազմաթիվ են հայերեն տեքստերում:

Հոգու ձայնային ուղեկցումները, թերևս, հիմք են այն բանի համար, որ մեծարենցյան տեքստում ձայնին վերապահվի երկու՝ **այսք** և **անդր** աշխարհների շաղկապման «գործառույթը»։ ձայնը այն կամուրջն է, որի օգնությամբ հնարավոր է այս աշխարհը կապել այն աշխարհին՝ անդրաշխարհին.

Շիթ մ՝ արցունքով՝ կաթիլ մը խունկ  
Սրբանոթին մեջ կը ցանե  
Մայրս՝ որ **կ'անցնի անտես դռնե**  
Եվ երջանիկ՝ կը դընե ունկ  
Անդրաշխարհեն եկող **ձայնին**<sup>10</sup>:

Դրանք դյութական, այսինքն՝ աստվածային ձայներ են, «որոնք անդին զիս կը տանին».

**Ձայներ** դյութիչ աշխարհներե, տարտա՛մ, անո՛ւյշ, հեռավո՛ր՝

Որոնք **անդին** զիս կը տանին **երանաստան մը** բաղձոտ...<sup>11</sup>:

Ինչ խոսք, բնական է, որ քաղաքակրթական այդ ձայնը մարդուն՝ որպես քաղաքակիրթ, մշակութային արարածի, միշտ դեպի իրեն է կանչում.

Իմ սո՛ւր, արթուն ականջում  
Մի խոր **ձեն** է միշտ հընչում,

<sup>9</sup> Վ Տեքյան, Երկերի ժողովածու երեք հատորով, հատոր 1, Եր., 1960, էջ 26:

<sup>10</sup> Մ. Մեծարենց, Երկերի լիակատար ժողովածու, Եր., 1981, էջ 184:

<sup>11</sup> Նույն տեղում, էջ 44:

Անհո՛ւն, անքո՛ւն կարոտով  
Իրեն մոտ է ինձ կանչում<sup>12</sup>:

Մեծարենցյան դյուրիչ, երանաստան աշխարհին հակաաշխարհ, անտիաշխարհ է տերյանական տեքստում հաճախ արծարծվող այն աշխարհը (ըստ էության՝ անտիաշխարհը), որտեղ ձայն չկա.

Մենք նետված ենք բոլորըս  
Երկիրն այս հեռու,  
Կանչում ենք միշտ - **ձայն չըկա**,  
Աղոթում ենք - ո՛ւմ...<sup>13</sup>:

Թումանյանական տեքստը ձայնի աստվածային, այսինքն՝ արարչական ու արարչագործական բնույթն է զգում.

Ես շընչում եմ միշտ կենդանի Աստծու շունչը ամենուր,  
Ես **լքում եմ** նրա **անդուտ կանչն ու հունչը** ամենուր...<sup>14</sup>:

Սրանք հայերեն տեքստերում ամեննին էլ պատահական փոխպայմանավորումներ չեն, այլապես կլինեին եզակի, այնինչ հայերենի համատեքստում դրանք ամենուր են:

Հայերենի համատեքստը փաստում է ձայնի՝ կյանքի, կենդանության պայման ու նախանշան լինելու հանգամանքը, սակայն և նրբորեն զանազանում է ձայների տեսակները. բոլոր ձայներն են գոյության նշան, բայց ոչ բոլորն են քաղաքակրթական գոյության նշան:

Ինչպես տեսանք, թումանյանական տեքստում ձայնի՝ կենդանության խորհուրդ լինելու հանգամանքը խարսխվում է **Աստծու կանչին**. **ձայնը Աստծու կանչն է**, որ անդադար դեպի իրեն է ձգում մարդուն, այն մարդուն, որն Աստծու պես ինքն էլ է ուզում ստեղծել: Հայերենի համատեքստի տերյանական հատվածում ևս ձայնը հատկապես քաղաքակրթական գոյության նշան է, քանի որ զուգադրվում է աղոթքին, այսինքն՝ Աստծու հետ հետադարձ կապին, փոխկապակցվածությանը, որ հավատն է: Եթե աղոթքի հասցեատերը բացակայում է, ուրեմն քաղաքակրթական գոյության գլխավոր հանգրվաններից մեկին՝ «տուն» հասնելու հույսը դառնում է անհեռանկար.

Կանչում ենք միշտ - **ձայն չըկա**,  
**Աղոթում ենք** - ո՛ւմ,  
Ո՛վ կըփրկե, ո՛վ կըգա,  
Որ տանի մեզ **տուն**...<sup>15</sup>:

Տերյանի մեկ ուրիշ տեքստում իրար կողքի են հայտնվում «արնաներկ» հայրենիքը, «գիշեր»-ը, «անլույս»-ն ու «լուտ»-ը, և այս համապատկերում դա անհնար է պատահականություն համարել.

<sup>12</sup> Հ. Թումանյան, Երկեր, Եր., 1980, էջ 21:

<sup>13</sup> Վ. Տերյան, Երկերի ժողովածու երեք հատորով, հատոր 1, էջ 261:

<sup>14</sup> Հ. Թումանյան, Երկեր, էջ 25:

<sup>15</sup> Վ. Տերյան, Երկերի ժողովածու երեք հատորով, հատոր 1, էջ 261:

Հայրենիքում իմ *արնաներկ*

*Գիշերն* իջավ անլույս ու *լուռ*...<sup>16</sup>:

Մերթ էլ ձայնը, զանազանվելով բնության, ֆիզիկական բյուր, բազմապիսի ու բազմաթիվ ձայներից, դառնում է քաղաքակրթական մեկ այլ կարևոր նշաններից մեկի՝ եղբայրության խորհուրդը.

Ի բիւր *ձայնից* բնութեան շքեղ,

Թէ երգք թռչին սիրողաբար,

Մատունք կուսին ամենագեղ,

Թէ որ զարնեն փափուկ քընար.

Չունին *ձայն* մի այնքան սիրուն,

Քան զանձկալի *Եղբայր* անուն<sup>17</sup>:

Չայնի և եղբայրության (քաղաքակրթություն) շաղկապումը հայերենի տեքստում դարձյալ մղվում է առաջնասպարեզ, բայց նախընտրվում է այն ձայնը, որը մղվում է դեպի խոսքի և՛ ասվելու, և՛ լսվելու տիրույթ (եղբայրություն) համեմատությամբ այն ձայների, որոնք նույնպես գոյակիրներ են (քանի որ ամենագեղ կույսի մատների տակից են ելել), սակայն դեռևս չեն շեշտվում որպես հատկապես հիշյալ տիրույթի (եղբայրություն-քաղաքակրթություն) պարտադիր հավակնորդ - կրողներ:

**Լռություն-մահի, ձայն-կենդանության, խոսք-քաղաքակրթական գոյության ու լինելության** լեզվամտածողական այս «ինքնաբերականությունը» եթե մշտառկա է հայ դասական տեքստում, ապա անպայմանորեն գոնե ենթագիտակցորեն պետք է որ վերարտադրվեր նաև այսօրվա՝ մեր օրերի գրողների բանաստեղծում-տեքստերում: Այդ տեքստերի մեջ **ձայն**-ին ուղեկցում են այն հասկացությունները (բառ, անուն, խոսք, լսողություն, աղմուկ, ժխոր, անանունություն, խլություն և այլն), որոնց բովանդակությունները **ձայն-կենդանություն** և **լռություն-մահ** համընկալումային դաշտերում են: Ասվածի անմիջական փաստումն են Արտաշես Արամի (Ղազարյանի) հետևյալ տողերը.

Մենք մեր ներքին ձայնին *ականջալուր* չեղանք,

Եվ արդ բաբելական *ժխորն է մեզ բանտել*<sup>18</sup>:

Արևշատ Ավագյանի բանաստեղծության մեջ ձայն-հնչյունները հայերեն են դառնում խոսք-բանի աշխարհարարման գիտակցությամբ.

*Խոսքի* աշխարհաստեղծ ճյուղերին

շարվում են *հնչյունները*,

*դառնում են հայերեն*

վանկ ու բառ...<sup>19</sup>:

Անհնար է չնկատել **խոսք** («սկզբում բանն էր») - **կյանք** («շունչ»)-

<sup>16</sup> Նույն տեղում, էջ 288:

<sup>17</sup> Մ. Պեշիկթաշյան, Երկերի լիակատար ժողովածու, Եր., 1987, էջ 41:

<sup>18</sup> «Գրական թերթ», թ. 4 (3237), 27 փետրվարի 2015 թ.:

<sup>19</sup> Ա. Ավագյան, Բառերի բանալին, Եր., 2003, էջ 67:

աշխարհաբարում (պտուղ) շղթան, կապը:

**Ձայն-բառ-խոսք** աստիճանակարգի խոսք (բանաստեղծություն) բաղադրիչի և իրականության (կյանքի, կյանքը կրող արյան) փոխաստեղծականության խորհուրդն է ամփոփում Էդվարդ Միլիտոնյանի բանաստեղծությունը.

Ոչինչ չի փոխարինի **բանաստեղծությանը**,

Նա դուրս է թռչում վանկ ու հանգից...

...Նրա թևերին՝ թանաքի **արյուն**,

...Եվ հողի մեջ խրվող գութանը

Նրա **լեզվով** է ակոսը **գրում**<sup>20</sup>:

Հրաչյա Թամրազյանը գրում է.

Ես ինչ-որ մեկի հիշողությունն եմ,

Ես արձագանքն եմ մի կորած ձայնի...<sup>21</sup>:

Բանաստեղծը ձայնը կորստից փրկելու մեջ է տեսնում քաղաքակրթական («հիշողությունն եմ») ընթացքը և ժառանգականությունը («արձագանքն եմ»):

«Լսելիություն» բանաստեղծության մեջ Հրաչյա Թամրազյանը ձայնի խորհուրդը տեսնում է լսելի լինելու հանգամանքում՝ անդրադարձնելով հայերենի լեզվամտածողական համակարգի այն էական պահանջը, որ ձայնը, լինելով ընդհանրապես գոյության նախապայման, միայն լսելի դառնալու դեպքում է վերածվում հատկապես քաղաքակրթական լինելության նախապայմանի.

Մեզ միացնում է դողացող մի լար,

Մեր երազները իրար են աճում,

Եվ մեր **ձայներն են խառնվում իրար**

Օրերի գաղտնի, խաղաղ **փոխկանչում**:

Եվ օրերի մեջ ինչպե՞ս պահպանել

Այդ միակ լարը դողացող և սուր.

Իբրև երջանիկ շնորհը պահի.

- **Լսելի լինել ուրիշի ներսում**<sup>22</sup>:

Երբ ձայնը լսվում է և ընկալվում, վերածվում է խոսքի: Խոսքը դառնում է ձայնի քաղաքակրթական աստիճանը: Ընդհանրապես կյանքի և մասնավորապես քաղաքակրթական կյանքի ու գոյության սահմանը ավելի է որոշարկվում ձայնը որպես խոսք ընկալելու անցում-ճանապարհին:

Մարդու քաղաքակրթական գոյությունը պայմանավորված է խոսքով: Խոսքը մարդու և մարդկության կյանքի նախապայմանն է: Կյանքն ու մահը տարանջատվում են այնտեղ, որտեղ տարանջատվում են

<sup>20</sup> Է. Միլիտոնյան, Ցասման հաց, Եր., 2006, էջ 4:

<sup>21</sup> Հ. Թամրազյան, Ձայների կղզի, Եր., 1989, էջ 196:

<sup>22</sup> Նույն տեղում, էջ 162-163:

ձայնն ու լռությունը, խոսքն ու համրությունը:

Չայնը պարզապէս լինելու, գոյության, կյանքի ու կենդանության սահման է, իսկ քաղաքակրթական գոյության ու լինելության սահմանը խոսքն է (խոսք դարձած ձայնը):

**Բանալի բառեր** – *համատեքստ, ձայն, կյանք, լռություն, մահ, լեզվամտածողական հոմանիշություն, քաղաքակրթական, լինելություն, խոսք, տեքստ*

**ТАДЕВОС ТОНОЯН – Лингвомыслительная синонимия голос – жизнь, молчание – смерть в контексте армянского языка.** – Голос как явление физическое и духовное сыграл и играет исключительную роль в становлении разумного существа – человека. Начальный элемент стремящегося к речи языка, голос обладает смысловым значением; это первое звено иерархической цепи *голос* (звук) – *слово* (имя, понятие) – *речь* (текст). Следовательно, голос (звук) с его смысловой нагрузкой есть единица не только языка, но и речи.

Голос – это, вообще говоря, символ бытия, более того, символ бытия цивилизованного. Он выявляет подсознательную синонимию с жизнью, тогда как антоним голоса, молчание, – со смертью. Именно в этой связи и возникла и по-прежнему создаётся не только языковедческая наука, но и художественная литература, чей главный герой – это голос во всей его иерархической и синонимической цепочке.

**Ключевые слова:** *контекст, голос, жизнь, молчание, смерть, лингвомыслительная синонимия, цивилизованный, бытие, речь*

**TADEVOS TONOYAN – Sound – Life, Silence – Death Language Thought Synonymies in the Armenian Context.** – Sound as a physical and spiritual phenomenon had an unprecedented role in the emergence and continual development of the human being.

In the course of development, naturally, the human being has preserved the memory and experience of his vocal-cultural beginning in the text created by him.

The sound being the minimal identifiable segment of speech has semantic significance – it is the first unit in the sound (phoneme) – word (name, concept) – speech (text) hierarchical chain. Therefore, the sound (phoneme) is not only a unit of language but also a unit of speech in terms of semantic charge.

The sound is a sign of existence in general but having the potential of being perceived, it is especially a sign of cultural being.

This system has its reflection in the context – totality of the texts created in Armenian – where the sound has gained a meaning of value system. The sound expresses cognitive synonymy with life, and antonym of sound i.e. silence – with death. Not only linguistic science but also fiction was created and is being created the main character being the sound in all its hierarchic, synonymic chain.

**Key words:** *context, sound, life, silence, death, language thought synonymity, cultural, being, speech, text*